Նախիջևանի կողմից կատարվող հրոսակային արշավանքները, որոնք բացարձակորեն խրախուսվում էին այդտեղի խաների կողմից, ոչ միայն կողոպտում էին Բերգուշետի, այժմյան Բարգուշատի, Կապանի և Զավնդուրի մահալների գյուղերը և քշում էին նրանց ոչխարն ու տավարը, այլև հանում տանում էին իրենց հետ այդ կողմերի բնակիչներին։ Թե Ղարաբաղի Մեհտի-Ղուլի խանն և թե սահմանի մոտ կանգնած փոքրաթիվ ռուսական կայազորը շարունակ խնդրում էին Անդրկովկասի կենտրոնական վարչությունից օժանդակ զորամասեր այդ հրոսակների չափազանցություններից[20] բնակչությունը պաշտպանելու համար[21]։ Թեև Գյուլիստանի դաշնագրությունը կնքվելուց հետո մինչև 1822 թ. և Ղարաբաղի խանի փախչելը Պարսկաստան՝ այդ արշավանքները պակասել էին, բայց այդ միջոցին Ղարաբաղի Աբուլ-Ֆետի-խանը իր գործակալների միջոցով դրդում էր սահմանամերձ շրջանների թուրք գյուղացիներին՝ թողնել ռուսական հողն ու իր կալվածքները (Օխչի շայից և Արաքսից հարավ) տեղափոխվել, այնպես, որ երբ վերացված խանական իշխանության փոխարեն նորակազմ Ղարաբաղի պրովինցիայի մեջ մտցվեց ռուսական վարչությունը, գավառի դանազան մասերից թուրք-թաթար բնակչության մի մասը հեռացած էր։ Այդպիսով Կապանն, Զավնդուրն ու Բերգուշետը բավականաչափ դատարկված էին ոչ միայն հայ, այլև թուրք տարրից։ Այդ երևույթը շատ ակնառու կերպով արտացոլված է Մոգիլևսկու և Երմոլով 2-րդի կազմած ցուցակագրության մեջ։

1805—1822 թթ. ժամանակաշրջանն այժմյան Զանգեզուրի համար ամենախառն շրջանն էր, անցողական շրջան, երբ հին պետական ձևը հիմնովին խախտված էր, իսկ նորը դեռ տարուբերումների մեջ էր և այնուհետև էլ մի երկու տասնամյակ մնում էր տարտամ, շփոթ և անձևակերպ վիճակի մեջ։ Այդ ժամանակաշրջանում արդեն բոլորովին քայքայվել էին նաև երկրում հաստատված պաշտպանողական սիստեմը, ռազմական կետերի բնույթն ու դասավորությունը։

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Մելիքները 1725 թ. հուլիսի 25-ին Պետրոս Մեծին ուղարկած մի գրության մեջ, որտեղ առարկում էին, թե ինչ դժվարությունների կարող են հանդիպել իրենք, եթե, ինչպես առաջարկվում էր ռուսական կառավարության կողմից, թողնեին իրենց երկիրն և ուղևնային տեղափոխվել ռուսների կողմից գրավված մերձկասպյան գավառները, առաջ էին քաշում այն պատճառաբանությունը, որ «էրկրներս սարով և տեղով շատ ամուր են, և մենք այս խալղս ամենքն իր էրկրումն սղնախ սղնախ եմք արել ամուր տեղերն և ամենքս մեկ սղնախին վերայ նստած պահում ենք»։ Եթե այդ ամրացած տեղերը թողնեն և իջնեն Կուրի դաշտավայրը, չեն կարողանա պատռել «չորս կողմերի էրկրներ առած օսմանցոց» օղակը, «մեկ կողմն էլ ղզլպաշ են»[22]։ Սղնախներում, այսինքն բնականից ամուր տեղերում, վտանգի ժամանակ պաշտպանվելու տակտիկան հատուկ էր հենց հնուց Սիսական երկրին, ինչպես առհասարակ Հայ-

[20] Արշավանքներից—чапаулы.

[21] «Акты, собранные Кавказскою Археографическою комиссиею», т. IV, № № 818, 819, 820, 824, 833, 845, 1106 և այլն։

[22] Эзов Г. А., նշված աշխ., էջ 421—422։